ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՆԱՐ-ԴՈՍԻ ԱՐՁԱԿԻ ԼԵԶՎԻ

ՍԱԹԵՆԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Հոդվածում քննվում են բարդ համադասական նախադասությունների կառուցվածքային-գործառական առանձնահատկությունները՝ ըստ Նար-Դոսի արձակի լեզվի:

Բանալի բառեր – նախադասություն, հնչերանգ, միտք, բարդ նախադասություն (Բն), բազմաբաղադրիչ բարդ նախադասություն (Բբն), երկբաղադրիչ նախադասություն:

Բարդ նախադասությունների սահմանման, Բն-ի տեսակներին, դրանց մեկը մյուսից տարբերակելու հարցին անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածում: Բն-ը կազմված է երկու և ավելի բաղադրիչ պարզ նախադասություններից, որոնք փոխկապակցված են քերականորեն, իմաստով, հնչերանգով և արտահայտում են մեկ միտք:

Բն-ների բաղադրիչները միասին արտահայտում են այն, ինչ չի կարող արտահայտվել բաղադրիչներից յուրաքանչյուրի առանձին գործածության դեպքում: Այսինքն՝ կարևոր են իրավիճակը, իրադրությունը, որում գործածվում են դրանք: Եթե այլ իրավիճակում դրանք ինքնուրույն գործածվեն, ապա կհամարվեն նախադասություն:

Բն-ները, քերականորեն և տրամաբանորեն միմյանց հետ կապակցված լեզվական միավորների ամբողջություն լինելուց բացի, ունեն միասնական հաղորդակցային արժեք:

Մեկ նկատառում: ***Բն-ի սահմանումից դուրս են ԲԲն-ները****, քանի որ սահմանումը վերաբերում է միայն երկբաղադրիչ Բն-երին:*

Գիտենք, որ Բն-ները միմյանցից տարբերվում են մասնավորապես կապակցության բառական միջոցների, բաղադրիչների շարադասության, նրանցում կիրառվող բայական ժամանակների ու ժամանակաձևերի, հնչերանգային առանձնահատկությունների միջոցով:

Պարզ նախադասության համազոր անդամներ կապակցող շաղկապները կապակցում են նաև Բհն-ների բաղադրիչներ: Համադասական այդ շաղ-

կապները Բին-ի բաղադրիչները միանալիս արտասանությամբ թեև հարում են երկրորդ բաղադրիչին, այնուամենայնիվ նրանք չեզոք են: Բին-ի բաղադրիչները դրվում են մեկը մյուսից հետո, նրանցում բայ-ստորոգյալներն արտահայտվում են բացարձակ ժամանակներով, որոնք հարաբերակցվում են խոսքի պահի հետ: Ինչ վերաբերում է հնչերանգին, ապա համադասական նախադասության բաղադրիչներն արտասանվում են թվարկման, հակադրության հնչերանգով: Եվս մեկ կարևոր հատկանիշ. եթե Բին-ում հնարավոր է՝ կառույցներն ունենան բաց շարքեր, ապա Բսն-ում դա պարզապես բացառվում է:

Բսն-ում գերադաս և ստորադաս բաղադրիչներն իրար կապակցվում են ստորադասական շաղկապների միջոցով (որոնք հատուկ են միայն Բսն-ին), գործածվում են հարաբերյալներն ու հարաբերական դերանունները: Ստորադասական շաղկապները, հարաբերական դերանունները մտնում են ստորադաս բաղադրիչների կազմի մեջ, մինչդեռ համադասական շաղկապները չէին մտնում նախադասությունների բաղադրիչների կազմի մեջ: Բսն-ում բաղադրիչներից մեկի միջադասումը մյուսի կազմում (սովորաբար երկրորդականը գերադասի մեջ) հնարավոր է: Հնարավոր է նաև գլխավորի կազմում ենթաստորադասությամբ կազմված երկու և ավելի նախադասությունների միջադասումը: Բսն-ում հնարավոր է, որ բաղադրիչներում բայ-ստորոգյալներն ունենան ժամանակային տարբեր պլաններ: Այս դեպքում բաղադրիչների գործողությունների կատարումը հարաբերակցվում է ոչ թե խոսելու պահի, այլ գլխավոր բաղադրիչի գործողության ժամանակի հետ: Եվ վերջապես՝ Բսն-երն ունեն իրենց հատուկ հնչերանգը. առաջին բաղադրիչի վերջին վանկի արտասանության ժամանակ ձայնի տոնն իր բարձրագույն կետին է հասնում, իսկ հետո աստիճանաբար իջնում է:

Հ. Պետրոսյանն իր «Հայերենագիտական բառարանի» «Բարդ համադասական նախադասություն» բառահոդվածում առանձնացնում է Բին-ի 5 տեսակ՝ միավորական, ներհակական կամ հակադրական, տրոհական, մեկնական, հավելական կամ հարակցական[1]:

Գ. Գարեգինյանը ևս այդպես է վարվում. նա էլ տարբերակում է միավորիչ, հակադրական, տրոհական, մեկնական, հարակցական Բին-ներ: Գարեգինյանը միավորիչ հարաբերություն արտահայտող Բին-ների մեջ առանձնացնում է՝ ա) թվարկում և համաժամանակություն արտահայտող, բ) թվարկում և գործողությունների տարաժամանակություն արտահայտող նախադասությունները

[1] **Պետրոսյան Հ.,** «Հայերենագիտական բառարան», Երևան, 1987, էջ 134,135:

ներ: Հակադրական Բին-ների մեջ առանձնացնում է զուգադրահակադրական, ժխտական, պայմանահակադրական, սահմանափակման հարաբերություն արտահայտող նախադասություններ: Տրոհական Բին-ները բաժանվում են 2 խմբի՝ 1) կառույցներ, որոնցում թվարկվում են այնպիսի փաստեր, որոնք, անկախ ժամանակից ու իրադրությունից, փոխադարձաբար բացառում են միմյանց, և 2) կառույցներ, որոնցում թվարկվում են փաստեր, որոնք փոփոխակի հաջորդականությամբ փոխարինում են իրար: Իսկ մեկնականներն իրենց հերթին լինում են՝ ա) ճշգրտող, պարզաբանող և բ) ընդհանրացնող[2]**:**

Ս. Աբրահամյանն առանձնացնում է Բին-ների 4 տեսակ՝ 1) միավորական, 2) ներհակական, 3) տրոհական, 4) հավելական: Ներհակականների մեջ տարբերակում է 4 ենթատեսակ՝ ա) հանդիպադրական, բ)հակասման, գ) ժխտման, դ) պայմանաներհակական[3]:

Վարագ Առաքելյանը 5 տիպի Բին-ներ է առանձնացնում՝ ա) համադրական, բ) հակադրական, գ) տրոհական, դ) հարակցական և ե) մեկնական[4]:

Արտաշես Պապոյանը կատարում է երկաստիճան դասակարգում: Նախ՝ տարբերակում է 2 խումբ՝ բաղիյուսական և ներհակական, որոնք միմյանց հակադրվում են իմաստակառուցվածքային որոշակի հատկանիշներով[5]:

Այդպիսի երկաստիճան դասակարգում կատարել են նաև Մ. Աբեղյանն[6] ու Ս. Պալասանյանը[7]:

Ի դեպ, մեր աշխատանքում հետևել ենք Պալասանյանի դասակարգմանը:

«Բաղիյուսական կոչվում է այն նախադասությունը, որի բաղադրիչները ներքին տրամաբանությամբ ու իմաստներով միավորվում, շարակցվում են իրար՝ առանց հակադրության, փոխադարձ ժխտման»[8]:

Այս տիպի Բին-ները բաժանվում են՝ 1) միավորական, 2) հավելական, 3) մեկնական, 4) մակաբերական, 5) մասնական, 6) բաղդատական տեսակների:

---

[2] **Աբրահամյան Ս.,** Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 569-600:
[3] **Գարեգինյան Գ.,** Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1991, էջ 34-78:
[4] **Առաքելյան Վ.**, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1969, էջ 295:
[5] **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.,** Ժամանակակից հ.լ. շարահյուսություն, Երևան, 2003, էջ 238:
[6] **Աբեղյան Մ**., Երկեր, հ. Զ, Երևան, էջ 538-555:
[7] **Պալասանյան Ս**., Քերականություն Մայրենի լեզվի, Տ., 1894, էջ 239:
[8] **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.,** նշվ. աշխ., էջ 238, 239:

«Ներհակական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչները իրենց ներքին տրամաբանությամբ ու իմաստներով հակադրվում են իրար կամ բացառում են միմյանց»[9]:

Ներհակական Բին-ները լինում են ժխտական, տրոհական, հակադրական, սահմանափակման, պայմանահակադրական:

Նար-Դոսի արձակում տարածված են այս երկու տիպերն էլ: Սակայն ամենից շատ տարածված են բաղհյուսական նախադասություններից հավելական և միավորական հարաբերություններով, իսկ ներհակական նախադասություններից՝ տրոհական, հակադրական հարաբերությամբ կապակցված Բին-ները:

«Միավորական է կոչվում այն կապակցությունը, որի բաղադրիչները միավորվում են մեկ ընդհանուր ամբողջի մեջ՝ արտահայտելով այնպիսի գործողություններ, եղելություններ, որոնք ունենում են մեկ և նույն ենթական»[10]:

Այս նախադասությունների հիմնական բնութագիրն այն է, որ որքան բաղադրիչ կա Բին-ների կազմում, այդքան էլ ենթակային վերագրվող հատկանիշ կա:

Կապակցման միջոցներն են և, ու, այլև, ևս, և՛..,և՛…, թե՛…, թե՛…, է՛լ…, է՛լ…, ո՛չ…, ո՛չ…, ոչ միայն…, այլև.., ինչպես և, ինչպես նաև, նաև միավորիչ շաղկապները:

Նար-Դոսի արձակում գործածության բացարձակ գերակշռություն ունի «և» մենադիր շաղկապով համադասական կառույցը:

Բաղադրիչները կապակցվում են նաև շարահարությամբ: Նշույթավոր և աննշույթ կապակցությունները կարող են կազմել և՛ բաց, և՛ փակ շարքեր:

Բին-ների բաղադրիչների գործողություններն իրականացվում են կա՛մ միաժամանակ, կա՛մ հաջորդաբար: Ըստ այդմ էլ գործողությունները համաժամանակյա են կամ տարաժամանակյա:

Նար-Դոսի արձակում գործածված Բին-ների բաղադրիչների բայ-սփորոգյալներն ամենից շատ հանդես են գալիս սահմանական եղանակի անցյալ կատարյալ - անցյալ կատարյալ, անկատար անցյալ - անկատար անցյալ ժամանակաձևերի զուգորդումով, քիչ չեն նույն սահմանական եղանակի, բայց տարբեր ժամանակաձևերի զուգորդումով բայ- սփորոգյալներ ունեցող Բին-նե-

[9] Նույն տեղում, էջ 239:
[10] Նույն տեղում:

որը: Ի դեպ, փարաժամանակյա գործողությամբ նախադասություններն ավելի շատ են:

Ա) ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

1. [1]Այդ ստվերը հալվեց, [2]ձուլվեց խուլ խավարի հետ: / «Պայքար», էջ 465/

1	=	2

Բ) ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

1. [1]Լուսինը չարաճճի կերպով նայում է նրանց [2]և շարունակում է ժպտալ խորհրդավոր կերպով… / «Մահը», էջ 35/

1	=	2

2. [1]Նրա չափից դուրս հարուստ մազերը հազիվ էին ծածկվում գլխարկի տակ [2]և իրենց ծանրությամբ կարծես անզոր կերպով ճնշում էին նրա հպարտորեն բարձրացրած գլուխը:/ «Մահը», էջ 20/

1	=	2

3. [1]Ես ոչ միայն լավ եմ հասկանում, [2]այլև լիովին ընդունում եմ ձեր ասածը: / «Պայքար», էջ 442/

1	=	2

4.[1]Հյուրասենյակում Բազենյանը կանգնած էր լուսամուտի առաջ [2]և մտազբաղ հայացքով նայում էր դեպի դուրս: / «Մահը», էջ 261/

1	=	2

5. [1]Եվան մնացել էր մենակ [2]և փակված էր իր սենյակում: / «Մահը», էջ 260/

1	=	2

«Հավելական է կոչվում այն կապակցությունը, որի բաղադրիչները, հաջորդելով մեկը մյուսին, ծավալում են հաղորդման սահմանները՝ բովանդակությամբ չհակասելով ու չհակադրվելով միմյանց»[11]:

[11] Նույն տեղում:

Հավելական Բին-ները միավորական Բին-ներին հակադրվում են նրանով, որ եթե վերջիններս ունեն մեկ ենթակա, որին բաղադրիչները վերագրում են այս կամ այն հատկանիշը, ապա հավելականներն ունեն ամենաքիչը երկու ենթակա և երկու ստորոգյալ:

Կապակցման միջոցները համընկնում են միավորական կապակցությունների կապակցման միջոցներին: Եվ միավորականների նման հավելական կապակցություններում էլ գերակշռող են «և», «ու» շաղկապները, *ու դարձյալ Նար-Դոսի արձակում բացարձակ գերակշռող է «և» մենադիր շաղկապը:*

Այս կապակցություններում նկարագրվող եղելությունները ևս կատարվում են կա՛մ միաժամանակ, կա՛մ տարբեր ժամանակահատվածներում:

Ա) ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

1. [1]Նոր գինեգործարանս արդեն պատրաստ է, [2]և այս տարի գինիները պատրաստելու եմ արդեն ամենանորագույն սիստեմով: / «Պայքար», էջ 369/

1	=	2

2.[1]Այն ժամանակ լեզվակն այլևս չի խոսիլ, [2]և ժամացույցը կմեռնի... / «Պայքար», էջ 382/

1	=	2

3.[1]Նա շտապեց փակել փեղկը, [2]և շփշփոցը խլացավ: / «Պայքար», էջ 471/

1	=	2

Բ) ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

1. [1]Նա դողում էր կատաղությունից, [2]և պենսնեն ցնցվում էր նրա քթի տակ: / «Պայքար», էջ 363/

1	=	2

2. [1]Երանի գոնե այդ նամակը հասնի Արմենակիս, [2]և մի պատասխան ստանանք նրանից:/«Մահը», էջ 271/

1	=	2

3.[1]Նրա դեմքը լուրջ էր, [2]աչքերը նայում էին մտահոգ հանգստությամբ: / «Մահը», էջ 236/

1	=	2

4. [1]Լրագիրը դուրս պրծավ Մարությանի ձեռքից, [2]և բարակ խշխշուն թերթիկները, բաժան-բաժան եղած թրթռալով օդի մեջ, թեթև ցրիվ եկան հատակի վրա: / «Մահը», էջ 295/

1	=	2

«Հակադրական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչներում արտահայտված գործողությունները, եղելությունները, երևույթները ներկայացվում են հակադրության հիմունքով»[12]:

Կապակցվում են բայց, իսկ, սակայն, մինչ, մինչդեռ, այնինչ և այլ շաղկապներով: *Նար-Դոսի արձակում գերակշռում են բայց և իսկ շաղկապները*: Հավելենք, որ այս տիպի Բին-ները փակ շարքերով նախադասություններ են: *Նար-Դոսի արձակում քիչ չեն այս նախադասությունների աննշույթ կապակցությունները*: Օրինակ.

1. [1]Նա պատրաստ է զոհելու իր անձը մերձավորի համար, [2]դուք մերձավորից զոհ եք պահանջում ձեր անձի համար: / «Պայքար», էջ 448/

1	=	2

2. [1]Նրա կուլտը հոգին է, [2]ձերը՝ նյութը: / « Պայքար», էջ 448/

1	=	2

Աննշույթ կապակցությունների շնորհիվ (խոսքը հատկապես վերջին մի քանի օրինակների մասին է) Նար-Դոսն առավել դիպուկ է նկարագրում իր գլխավոր կերպարներին, ընդգծում նրանց տարբերություններն ու բնավորության հակադիր կողմերը՝ այդպիսով առավել շոշափելի դարձնելով նրանց ընթերցողների համար:

Հակադրական կապակցությունների նշույթավոր տարբերակներն ավելի հաճախ են հանդիպում Նար-Դոսի արձակում: Օրինակ.

1. [1]Նա ուզում էր այդ երեխայի հետ խոսել, [2]բայց երեխայի հետ խոսելու եղանակն էլ չգիտեր:/«Մահը», էջ 23/

1	=	2

[12] Նույն տեղում:

2. [1]Ինչպես և Շահյանը, այնպես և մյուս դասընկերներից շատ-շատերը նրանից անհամեմատ ավելի բարեխիղճ և աշխատասեր աշակերտներ էին, [2]բայց դրա փոխարեն Բազենյանը զարմանալի ընդունակություն ուներ ամենքի վրա իշխելու»: / «Մահը», էջ 10/

1	=	2

3. Գիտես, բայց հին մտքերդ շարունակում են քշել քեզ իրենց հին ճանապարհով: /«Պայքար», էջ 352/

1	=	2

Այսպիսով, *Նար-Դոսի արձակում տարածված են Բհն-ների <u>և՛ բաղիյուսական, և՛ ներհակական</u> տիպերը: Բաղիյուսականներից տարածված են հավելական և միավորական հարաբերություններով, իսկ ներհակական նախադասություններից՝ տրոհական, հակադրական հարաբերությամբ կապակցվածները:*

Նար-Դոսի արձակում գործածված Բհն-ների բաղադրիչների բայ-ստորոգյալներն ամենից շատ հանդես են գալիս սահմանական եղանակի <u>անցյալ կատարյալ</u> - <u>անցյալ կատարյալ</u>, <u>անկատար անցյալ</u> - <u>անկատար անցյալ</u> ժամանակաձևերի զուգորդումով, քիչ չեն նույն սահմանական եղանակի, բայց տարբեր ժամանակաձևերի զուգորդումով բայ- ստորոգյալներ ունեցող Բհն-ները: Ի դեպ, տարաժամանակյա գործողությամբ նախադասություններն ավելի շատ են:

Նար-Դոսի արձակի բաղիյուսական հարաբերությամբ բարդ համադասական նախադասություններում շաղկապներից գործածության բացարձակ գերակշռություն ունի <u>և</u> մենադիր շաղկապով համադասական կառույցը:

Հակադրական կապակցությունների նշույթավոր տարբերակներն ավելի հաճախ են հանդիպում Նար-Դոսի արձակում: Փակ շարքերով հակադրական կապակցություններում *գերակշռում են <u>բայց</u> և <u>իսկ</u> շաղկապները, թեև քիչ չեն այս նախադասությունների աննշույթ կապակցությունները ևս*:

СТРУКТУРНО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СЛОЖНОСОЧИНЕННОГО ПРЕДЛОЖЕНИЯ В ПРОЗЕ НАР-ДОСА

САТЕНИК БАДАЛЯН

В статье делается попытка изучения конструктивно-функциональных особенностей многокомпонентного сложного предложения (мсп) в прозе Нар-Доса.

Ключевые слова – предложение, тембр, мысль, сложное предложение (сп), многокомпонентное сложное предложение (мсп), двухкомпонентное предложение.

THE STRUCTURAL-FUNCTIONAL PECULIARITIES OF COMPLEX SENTENCES IN THE PROSE OF NAR-DOS

SATENIK BADALYAN

In this article Satenik Badalyan examines the structural and functional properties of complex sentences in Nar-Dos's prose.

Key words – sentence, phonetic tone, thought, complex sentence, a multi-clause sentence, a compound sentence

Համառոտագրություններ

Մ. ..... «Մահը»
Պ. ..... «Պայքար»
Բն ..... բարդ նախադասություն
Բհն ..... բարդ համադասական նախադասություն
Բբն ..... բազմաբաղադրիչ բարդ նախադասություն